

## ՓՈԽԸՄԲՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

### Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի և Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետության միջև համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզը և Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետությունը (այսուհետ՝ «Մասնակիցներ»),

Նկատի ունենալով 2001թ. հոկտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև ստորագրված բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին պայմանագրի դրույթները,

Հաշվի առնելով տնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության խորացման և ընդլայնման փոխադարձ հետաքրքրությունները,

Առաջնորդվելով հավասարության և փոխշահավետության սկզբունքներով,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

#### **I. Փոխըմբռնման հուշագրի առարկան**

1. Սույն Փոխըմբռնման հուշագրի դրույթների և Մասնակիցների պետությունների ներպետական օրենսդրությունների համաձայն Մասնակիցները կուսումնասիրեն համագործակցության զարգացման հնարավորությունները հետևյալ ուղղություններով՝
  - Արդյունաբերություն, գյուղատնտեսություն, առևտուր և տրանսպորտ,
  - Զբոսաշրջություն, սպորտ և երիտասարդության հարցեր,
  - Կրթություն, բնակչության առողջապահություն և սոցիալական պաշտպանվածություն,
  - Նորարարական տեխնոլոգիաներ, գիտություն և տեխնիկա,
  - Տեղական ինքնակառավարում,
  - Մշակույթ և արվեստ:

## II. Համագործակցություն տնտեսական ոլորտում

### Ա) Համագործակցության ուղղությունները

1. Մասնակիցները կհամագործակցեն տնտեսության ոլորտում՝ նպաստելով երկկողմ տնտեսական կապերի զարգացմանը, նոր տեխնոլոգիաների կիրառման բնագավառում փորձի փոխանակմանը, խրախուսելով ներդրումները, ստեղծելով անհրաժեշտ պայմաններ երկկողմ փոխշահավետ առևտրի զարգացման համար:
2. Մասնակիցները քայլեր կձեռնարկեն բարենպաստ պայմաններ ապահելու միմյանց ձեռնարկատիրական կառույցների զարգացման, իրենց տարածքներում տեղակայված համատեղ ձեռնարկությունների, բաժնետիրական ընկերությունների ստեղծման ուղղությամբ:

### III. Համագործակցության իրականացման ձևերը

- 1 Մասնակիցները սույն Փոխըմբռնման հուշագրի սույն մասի I-ին բաժնով սահմանված համագործակցության իրականացման շրջանակներում տեղեկատվություն կփոխանակեն վերոհիշյալ համագործակցության ոլորտների վերաբերյալ, կկազմակերպեն համատեղ միջոցառումներ, քննարկումներ, ցուցահանդեսներ, գործարար համաժողովներ:
- 2 Մասնակիցները, իրենց իրավասությունների շրջանակներում, անհրաժեշտ աջակցություն կցուցաբերեն և կնպաստեն միմյանց տարբեր հաստատությունների միջև կապերի հաստատմանը և համագործակցության զարգացմանը:

### IV. Շրջանակային համաձայնագիր

Սույնով Մասնակիցներն իրենց մտադրությունն են հայտնում ստորագրելու «Առևտրի, տնտեսական, գիտատեխնիկական եւ մշակութային համագործակցության մասին» շրջանակային պայմանագիր:


### V. Փոխըմբռնման հուշագրի գործողությունը

Սույն Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից եւ գործում է անորոշ ժամկետով:


Մասնակիցներից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Փոխըմբռնման հուշագիրը մյուս Մասնակցին գրավոր տեղեկացնելով այն դադարեցնելու իր մտադրության մասին: Այդ դեպքում, Փոխըմբռնման հուշագրի գործողությունը կդադարի Մասնակցի ծանուցումը ստանալուց հետո՝ 3 (երեք) ամիս հետո:

Կատարված է ք. Բաթումիում 2013թ. սեպտեմբերի 9-ին, երկու օրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն և վրացերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության Լոռու  
մարզի կողմից՝

  
Մարզպետ  
Արթուր ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Վրաստանի Աջարիայի Ինքնավար  
Հանրապետության կողմից՝

  
Կառավարության ղեկավար  
Արշիլ ԽԱԲԱՁԵ